

# Յ Ե Շ Ա Ջ Ո Ւ Թ Ք Ի Ւ Ն Գ

---

Ա.

Թուականն էր 1901. ամիսն Ապրիլ, Աղուացն սկսած էր. Միջինքն անցած, Ռուբեռութիւն մի էլ կատարում առ Եւ բոպ. Մալայեան թերակղզին էի եկած, արձակուրդիւ: Օրն էր Մազկազարդ կիրակի: Ծոգենաւն, կասեցուցեալ ընթացիւք, հանգարաօրէն մտաւ Սուէզի ջրուղին: Աջ կողմն տարածում էր Արարիոյ ամայի անապատն. ձախ կողմն թերթի Եզիպոսն: Խսմայէլիս կայարանէն շոգեկառքն մեկնում էր առ երկրամէջ. Նաևին զստիկոնին վերայ, նստած իմ աթոռում, միտքս ընկերում էր այդ շոգեկառքին. Երթում էր Դահիրէ կամ Աղեքսանդրիա, ուր կային հազարաւոր իմ հայրենակիցներէն: Եւ, թերեւս, այդ բուպէին իսկ, եկեղեցիներին մէջ համախմբեալ, «ինկօք և մունիդինօք և ամենայն զարդուր», զպրաց դասցն սկսում էին երգել Շարականի այդ փառարանական գոհարն. « Այսօր ընդ հրակեան դասացն օրհնարանէին ծերքն ուստոյք և ադայքն արմաւենեօք. ովհաննա օրհնեալ եկեալ ի յանուն Տեսան»: Վճռեցի Պօրտ Այսիդ ցամաց իշնել և Աւագ շարթն և Զատիկն յԱղեքսանդրիա անցուցանել, ապա շարունակել ուղնորութիւնն:

Բ.

Թերեւս զուրկ չլինի շահեկանութենէ եթէ, ի սկզբան անդ, համաստիւ և անցողակի՞ քանի մի խօսք յիշենք ի մասին և Մալայեան թերակղզւոյն ուրք վիճակուած էր ինձ ապրիւ, որպէս Տէրութեան Պաշտօնեայ (Civil Servant), քսանեւով տարիներ (1885էն մինչև 1913): Գրեթէ միմիայն հայն էի այդ երկրում: Ինչպէս ուշից բուրոյ թերակղզիք, նոյնպէս և Մալայեան թերակղզին եռանկիւնածն է: Հիւսիսակողման սահմանագիծն կից է Սիհամ

երկրին. Զինական ծովն և Մալայայի ջրանցքն ամփոփում են աջ և ահեակ կողմերն ցամացին սեպածն ծայրն, առ հարաւ, հազիւ մէկ մղոնաւ հեռու է Այն գափուո կղզին և աշխարհագրական միայն մէկ աստիճանաւ Այլթեցեալ Գօտիէն: Դարաւոր ժամանակօց ծանօթ Զօնօրայ Նեղուցն բաժանում էր թերակղզին Այն գափուէն, բայց տարի մի յառաջ, երկուամ երկաթուղիքն միացնելոյ նպատակաւ, կարծրահիմն թումբ մի (causeway) կազմուցաւ Նեղուցին մէջ, որով ցամացային հաղորդակցութիւն հաստատուեցաւ երկու ափանց մէջ: Թերակղզին ունի չորս հարիւր մղոն տարածութիւն հիւսիսէն առ հարաւ. ամենամեծ լայնութիւնն է իննուուն մղոն: Գրեթէ բոլորովին անտառապատ է, բայց ունի, նաևս, հոյակապ քաղաքներ, Բնաշխարհնեկ բնակչաց (Մալայից և ներագաղթեալ Զինէացւոց) թիւն հասնում է մի և կէս միլիոնի: Մերձաւորապէս՝ իրը տասն հազար Երրուպացիք հաստատուած են երկրին մէջ, որպէս Տէրութեան Պաշտօնեայ և առևտրականց: Գլխաւոր թերեն են անագ և ձգական խէժ, որը մեծաբանակ մացարեր եկամտի աղրիւր են կազմում գասն Տէրութեանն: Այլթերորդ դարէն սկսեալ՝ Մալայիր ընդունած են Մամեղական կրօնըն, Բնիկ Մալայերէն լեզուն քայլցրահնչիւն է և կատարեալ, ի հեճուկս ցերականական պարզութեանն: Գրականութեան մէջ գործ են ածում Արաբական Ալփարետըն, որոյ բուն ցամանեմի տափաց վերայ յաւելացուցած են եօթն տառեր ի դիւրութիւն իւրեանց լեզուին, ինչպէս տեսնում ենց ուրիշ օտար ազգաց մէջ ևս, զոր օրինակ՝ Պարսից, Վերին Հնդկաց և այլրց, որը որդեգրած են Արաբական Աթութայիցն: Թերակղզին բովանդակում է զանազան նահանգներ, մէն մի ունելով իւր Սուլթան և ժառանգական Պետութիւն: Մինչև յիսուն տարով յառաջ իւրացանչիւր Սուլթան ինցնիշխան կառավարում էր իւր նահանգն, թէսէտն կարի նախատիպ ձեներով, բայց անպական էին արնահեղ խռովութիւնը ընդ մէջ Զինէացի քաջմա-

յարդ Գաղթականութեան տարրերական կուսակցութեանց, որոց ժեռումն էին անագի շահարեր հանքերն ։ Անկարող ի խաղաղեցուցանել սոցա անվերջ կազ և կոփ և վասն որոյ՝ ճարահատեալ, սկիզբն մի՝ ապա միւս Սուլթան, 1874էն սկսեալ, հրաւիրեցին Անգղիացւոց իւրեանց նահանգներն ընդունիլ Յրիտանիոյ Հովանաւորութեան ներքոյ։ Այսու՝ հաստատուեցաւ Յրիտանական Գաղթային Հովանաւոր Կառավարութիւնն Մալայեան թիրակղում, և, քանի մի տարի յետոյ, օգտուելով ժամանակի հաստացեալ պայմաններէն, նահանգների արդէն խնամացեալ վարչութիւնն համախմբեցին ի մի, որով, այսօր, Ասիոյ այդ վերջաման ծանօթ է մեզ որպէս Միացեալ Մալայեան Պետութիւնը (Federated Malay States), մի միայն բացառութիւնն լինելով Զօնօրայ Նահանգն (թիրակղույն վերջին ծայրամասն), որ գեռ ազատ ինքնիշխանութիւն է վայելում իւր սեպական Սուլթանի ներքոյ։ Անգղիացւոց մուտն այս Նահանգների մէջ և ստանձնումն վարչութեան և համայնական ելևմտից կառավարութեան, մեծ բարութեան և բարզաւաճման միջոցը եղեն երկրին համար։ Մալային, ընդհանրապէս, բաւարար, է փոքրով։ Ինքն հարուստ մարդ է համարում, ո՞չ թէ իւր նիւթական նօխութեամբ այլ սակաւապէտ բաւականութեամբ։ Այրում է անտարին մէջ ապրիլ ցեկեանս անվղով, անհոգ և անփոյթ Յեղային հեշտակեաց բնաւորութիւնն շատ մօտենում է պղերգութեան։ Գոհ է՝ եթէ ունի իւր փոքրիկ համեստ հիւղն, յօրինուած անտառարմաւենույ ուստերէ և կառուցուած չորս գերանների վերայ, և բաւական բարձրութեամբ գետնոյ մակրդակէն՝ որպէս զի զերծ լինի գաղանների և ուրիշ վտանգաւոր կենդանեաց փորձանքներէն։ Իւր կինն է իւր այգեզործն, սա մացրում է մացաններէ՝ տնակին կից գետնոյն փոքրիկ մի մասն. մշակում է իւր բրինձն, ալգո և տափիօկա, վարունգն և կարմիր պղպեղն, Մակայն ինքն, որպէս տէր և գլուխ, շատանում

է յոյլ աչօց՝ վերակացու հանդիսանալ առոնին վաստակաւորաց աշխատանիներին, և, ընկողմանել իւր հիւղոյն պատրսպարեալ մէկ անկինում։ իւր որսորդական երկայն եղէզն (սումայիան) իւր բովլ, հրակում է բարձրաբերձ ծառերի գագաթներն։ Ահա իջաւ անտառահաւան պարարակ. հանգչեց մերձակայ ճիւղոյն մի վերայ, կապիկներն սրբա բարեկամներն են և անկակած է, որ, անտես իւրմէ, ունի թշնամի մի ի դարանի։ Հսկողն, զգուշութեամբ, մեռք է առնում եղէզն։ կորիկ փոքրիկ կաւեայ զնդակն դնում է իւր լեզուի ծայրին և եղեգան խողովակի միջով ուժգնակի փշելով արձակում է առ իւր կէս նպատակին, և անվրէպ ուղղութիւնը, որսում է իւր առօրեայ կերակորն։ Եւ, այսպէս, ապրում է ի ծննդենէ մինչ ցելս կնաց, Ալենտուրն իւր համար նշանակութիւնն չունի. չգիտէ ինչ է յառաջադիմութիւնն։ Մի նահանգէ առ միւսն սովոր էին իւրեանց ճանապարհորդութիւնն կառարել յամբընթաց փիզերի միջոցաւ, տաժանելի հանգամանաց ներքոյ։ Երկիրն միշտ յետադաս և ինեղն վիճակում էր։ Սուլթանների գանձատուններն զրիթէ անուամբ եեթ էին. եկամուտներն անհաստատուն։ Անգղիացիր, նախ, շինեցին անտառամէջ պղողուայր և կառուղիք. յետոյ, կառուցին մեծ քաղաքներ և Պետական երկաթուղիք. Երբ ես պաշտօն ստացայ, 1880ին, միայն եօթն մըննաչափ երկաթուղին նոր բացուած էր. և արդ, շնորհն Անգղիացւոց յառաջադիմական ջանից, հասնում է յաւել քան մի հազար մզոնաց. Այսօր, կարելի է Մինչավորուէն երթալ մինչև Ալիամ, բոլոր ճանապարհն երկաթուղուով։

## Գ.

Աղեքսանդրիոյ Հայոց Եկեղեցիէն ոչ շատ հեռու՝ ապրում էին խումբ մի Հայ ապաստանեալը ի ներքոյ խնամատարութեան Եգիպտոսի Հայոց նորահաստատ բարեզործական հաստատութեան. Շատոնց Մականայ կոտորածի տարարախտ վերա-

պրոդըն էին։ Աւագ երեքշաբաթ օրն տը-  
խոր այցելութիւն մի տուի մեր այս  
տրտմաւ հայրենակիցներին։ Ի հեճուկս  
իրեանց սոսկալի յիշատակներին, հան-  
գիս և բաւարար էին երեւում և գոհ  
Բարեգործականին խնամքներէն։ Եւ, գո-  
վելի է տեսնել որ այդ նշանաւոր հաս-  
տառութեան մայր արմատն որ աւուր  
ճիշեր ընդարձակելով յամենայն կողմանա,  
իւր զովացուցիչ սաղարթների ներքոյ այ-  
սօր՝ ևս առաւել քան յառաջ՝ շուր և հո-  
վանի է լինում վշտացելոց։ ամոքում  
նոցա ցամացեալ սիրածին, հաց և ջուր  
մատակարարում կարուաւորաց, օթեան և  
դաստիարակութիւն՝ գեռասաց որրոց։ Եւս  
տուաւել բարզաւաճումն մաղթեմբ հաստա-  
տութեանն և արեշատոթիւն ազնիւ և  
անձնուէր աշխատողացն։

Վելյիշեալ տեսակցութենէս ի վերա-  
զարձիս, անցնում էի Ալեքսանդրիոյ գրե-  
խաւոր հարապարակէն Սրբարանի մի ար-  
տաքին սեմոց միոյն մօտ, արեւոյն ջեր-  
մութենէն հովանաւորեալ մի անկինում,  
փոքրիկ եռոտնեայ աթոռոյ մի վերայ  
նստած էր զառամեալ Ալբար մուրացկան  
մի (Ֆալիր), երկայն ծիւնափայլ մօրութով,  
և գունատեալ բնաշխարհիկ իւր վերար-  
կուն ձգեալ ուսոց վերայ ։ Նահապետական  
կերպարաններն զրաւիչ էին։ իւր ծերութիւնն  
պատկառելի։ Մատեցայ, Անդադար ծիւում  
էր իւր լիրուին և «Ալլահ – ու – Աքրար»  
միջարկութեամբ պատում էր յիշողու-  
թիւնըն խումբ մի ունկնդիր փողոցաշըլիկ  
պատանեկաց։ Հետաքրքրուեցայ։ Թարգ-  
մանի մի միջոցաւ հարցուցի ցանի՞ էին  
իւր տարիին։ Ասաց թէ Աստուած մեծ է,  
ծնուած նապոլիոնի Սքիպոոս արշաւան-  
ցէն տարի մի յետոյ։ Մօհամմէտ Ալիի  
գործողութիւնն քաջ յիշում էր. նա Ե-  
զիստոսի վերածնողն էր. Ականատես եղած  
էր Մամլուէնների կոտորածին։ Յիշում ե՞ս  
Նուրար Փաշայն, հարցուցի, և ազգաւ ո՞վ  
էր նա։ Այս, յիշում էր, բարի լինի յի-  
շատակն. մեծ և ազնիւ միբոտ ունէր որ  
տրոփում էր համահաւասար ամէնու հա-  
մար, նա մանաւանդ վասն բարելաւու-

թեան ռամիկ դասակարգին, հերկագործին  
բարեկամի էր նա, և մատնանիշ առնելով  
առ հրապարակին մէկ կողմն, ասաց, միեւ-  
նոյն ազգին էր պատկանում որպէս այդ  
խեղճերն՝ որք նստած էին հրապարակի  
յուշարձանին շորջն և որք ըստ իւր  
իսկ զիտութեան, չորս կամ հինգ տարիք  
էին այդ տեղ նստած ցորեկներն աշխա-  
տում էին, անձին ջանիք, հանապազո-  
րեայ զառն մի բիելոր հացն ձեռք բիբել,  
անցորդաց կօշիկներն մարգրելով։ Աւազու-  
թիւնն դոքա իմ հայրենակիցներս էին.  
բայց ո՞վ էին, ուստի եկած էին. այդ ի՞նչ  
անողոք ճակատազիր էր որ սոցա տարա-  
գրած էր իւրեանց սիրեցիալ բնավայրէն,  
զուարթ հովիտներէն, կենդանաբար աղ-  
րիբիններէն, զորպալից օճախներէն, և  
պարտադրեալ աւուր հացն հայթայթել  
այդպիսի մի վայրաբարշ և ստորնացուցիչ  
աշխատանքով։ Կարդում ենք զիցարա-  
նութեան մէջ, որ կրակի աստուածն,  
Վուլկանոս, զարբնեց զՊանդորա, Ողիմ-  
պիան աստուածը և աստուածուհից զար-  
գարեցին զնա չընազագոյն յատկութեամբց  
ի մէջ կանանց և պարզեցին նման տուի  
մի, որոյ կամարիչն բարձրացնելով՝ ան-  
թիւ և բազմատեսակ ախտք և չարից  
զուրս էին հոսում ի չարչարել զմանկա-  
նացու, սակայն վերապահելով յոյն միայն  
ի միթիթարութիւն մարդկային սեռուն ինչ։  
Արդեօք Պանդորաի առասպեկական այդ  
տուփն, յաւիտեան զրկեալ կափարիչէն և  
բնաջնջեալ միթիթարիչ յոյսէն, հրիտակե-  
ցաւ Հայաստան բռնապետող անզութ և  
անողորմ ժառանգորդաց տարտարոսային  
կաղ Թաթթարին։ Յուզեալ մտօր՝ և դան-  
դաղաբայլ մտօեցայ այդ տիրազեցիկ  
խմբին։ Հանգարտիկ՝ պտոյտք մի արարի  
իւրեանց շորջն, տասն և չորս հոգի էին։  
Ոմանց զէմբերն, զորս մարթացայ տեսնել,  
երեւում էին, որպէս թէ յուսահատ և ան-  
ըմբռնելի երազի մի մէջ էին։ Կանգ առի  
նոցա միոյն հանգէպ։ Բարձրահասակ էր,  
վայելչակազմ և հսկայամարտին։ Թերևս  
հազիւ ցառասնամեայ, լայն ուսերով, եր-  
կայն բազուկներով։ Նստած էր, հոլանի

գետնոյ վերայ. ծունգերն ամրաքիւ հաւասար ծնօտին, բազուկներն ծալիալ ծլն-գաց շուրջն, ճակատն հանգչեալ բարդկաց վերայ: Անազմուկ՝ ոտա հանգչեցոցի փայտիայ փոքրիկ պատուանդանին վերայ: Խմացաւ, բայց դեռ ևս երեսն տեսած չեմ: Որպէս թէ դեռ կէս երազի մէջ, վեր առեց խողանակն և մերենայարար գործ սկսեց տուանց երեսն նայելոյ: « Հաւ մը փայլ տուր »: ասացի: Խւր հայրնին լեզուն էր որ դպչեց ականջն: Կարծես թէ կէս սթափեցաւ, զլուխն շարժեց ի հաւանութիւն: Խողանակն փոխանակեց ընդ փայլատու թաւշի հնոտի պատառին: Վերսկսեց աշխատանքն: « Քանի՞ տարի է որ Եզիպոտու էր », հարցուցի: Յայտնապէս՝ սարսուռ մի ցնցեց մարմինն: Այս անգամ, զանդաղորէն՝ երեսն բարձրացնելով, իւր արխազգեաց սկ սկ խոր աշբեռովն վայրկեան մի վեր նայեց ինձ և պատասխանեց լակոնարար. « Սաստոնի դէպքէն յետոյ »: Ինչ կերպ և, յանուն արդարութեան, ընդէ՞ր այս կորովի լերան մարդն յափտենական տառապանաց ենթարկուած էր: Արգե՞ց իւր սիրեցեալ կողակիցն էր որ կորսնցուցած էր, գորովալից մայր մի, կաթողին զաւակ մի և կամ, թերե՛ս, ականատես եղած համայն իւր ընտանեաց ողջակիզման՝ համիդեան անարդարութեան ատրուշանին վերայ: Եւ որչա՞փ ապաշաւեցայ և ինքնցինք կշտամբեցի որ այս տոշուեալ անձին սարսափելի դառն յիշողութիւնն ես անգիտարար զարթնացուցած էի:

## Դ.

Օրն էր Աւագ Աւրբաթ. թուականն 1901, որպէս արդէն յիշած եմ: Ակերսանդրիոյ Հայոց եկեղեցին լի էր երկսեռ հաւատացելովք, ի ներքոյ և յարտարայ: Թաղման կարգն էին կատարում: Փամկոչն նշամարեց որ անձանօթ ոմն եմ, ինձ առաջնորդեց եկեղեցւոյն մէջ. բախտառը եղայ որ կանգնելոյ տեղ գտայ վերջններ անկեան մօտ: Անդ էին բազմութիւն ամենայն

զասակարգի, տեղացի ժողովրդեան. անդ էին Սաստոնի կոտորածէն փախստական բազմաչարչը տարտպեալըն: Եկեղեցական արարողութիւնն յար և նման էին՝ ինչ որ տեսած էի պարսկաստանի և Ծնդկաստանի մեր եկեղեցեաց մէջ: բայց խորհրդաւոր նորութիւնն ես կային կարի ուշագրաւ, որը մեծ տպաւորութիւն թողին իմ մոտաց վերայ: Ահղանին վերայ, ծայրէ ի ծայր, զիգուած էին մեծ քանակութեամբ նորափթիթ գեղեցիկ կարմիր վարդեր, ըլլածե, խորհրդանիշ Գողգոթայի: Այս վարդարլուրի մէջտեղն զետեղուած էր խաչափայս մի եօթն ստաչափ բարձրութեամբ (որպէս երեսում էր ինձ), որոյ քառամեր կեղրոնում կախուած էր փոքրիկ խաչ մի, պատուական մետաղէ, ի նշան խաչելեալն Քրիստոսի: Սեղանոյն աջ կողմն զրուած էր, պատուանդանի մի վերայ, զմբեթաւոր արծաթակերտ Տապան մի որ, ըստ իմ ընթերակայ մէկ հայրենակցին, կերպաւորուած էր ըստ օրինակի Երուաղեմի Սուրբ Գերեզմանի Տաճարին: Դպիրըն երգեցին այդ հրաշալի շարականն. « Պարզեատուն տեճենեցուն, այսոր, խնդրի կտրգես ի Պիտառուն... Հաւատացեալըն, համանգամայն, ի ծունգ անկան, լիճակին եկեղեցական դասուց Արարողապետն, Վարդապետն, մերձեցու խաչափայտին, առաւ և իջոյց փոքրիկ խաչն և, երկիւուածութեամբ, ամփոփեց Տապանին մէջ — անդ մաւ մինչև Սուրբ Յարութեան առաւոտն: Վարդապետն խաչակնցեց ժողովուրդն, տուաւ արծակման բարերանական օրնութիւնն: Վայրկեան մի խորին լուսթիւն տիրեց և յետոյ, յանկարծ՝ որպէս թէ միանպատակ մզմամբ, համայն ժողովուրդն սկսաւ անհամերեց զրոհել առ Սեղանն: Այս ինչ է. ինձ համար նորութիւն մի է. չեմ հասկանում: « Երուանդ, շուտ ըրէ, միւս կողմն անցիր. այստեղ ճանապարհ չիկայ »: « Արշակ, երկու հատ բեր, մէկ հատ ևս մայրիկի համար »: Հիմայ հասկացայ: Խրեանց ջերմեռանդ փափազն կատարուած էր: Գուրս են երթում եկեղեցին, մէն մի տանելով իւր հետ հատիկ

մի վարդ առեալ խաչափայտին ստորո-  
տէն։ Ո՞չ որ ճանաչէ զիս և ես ո՞չ որի։  
Բայց մէկ դէմք եմ տեսնում։ Երկակա-  
յութին է թէ իրականութիւն։ Այս՝ չեմ  
սիալում։ յիշում եմ, նոյն է։ Այդ հակայ  
կտղմուածքն, այդ տրամադրոշմ դէմքն,  
անգամ մի տեսած՝ յաւիտեան կարելի չէ  
մոռանալ։ Գլխիկոր, արտօսրալից, խոն-  
ակն։ Ճեալ բայլիք, զուրս է անցնում, միայնակ  
ձեռցումն վարդենոյ ճիւղ մի հինգ փթթ-  
ներով։ Մէկ հասիկ վարդ բաւ է իւր  
համար, իսկ միւսնե՞րն. Թող չյանդնիմ  
շօշափել, թերե՞ս ... ի յիշատակ ...  
Սպասունի ...

Ա. Տէր Մ. Գրիգորյան

## Մ Ա Յ Ռ Դ Ի Ւ Ա Ն

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Նար. տես թագմ. 1924, էջ 348)

### ԴԵ

Երուաղեմի Ա. Յակոբայ վանքին նկատմամբ վիճուած հարցին շուրջ, յետ  
երկու տարւոյ, այս անգամ նորութեամբ մ'է որ կը զրադի Հ. Պօղոս վարդապետ։  
Յիշատակուած Գրիգոր վարդապետը՝ Գրիգոր «Նշթայակիր» կոչուող Երու-  
սաղեմի պատրիարքն է. իսկ «Հրեշտակ»՝ Գաղղիացւոց զեսպանը։  
Նամակին այն կէտերը՝ որոնց կը շօշափեն ակնարկուած ինդիրը՝ իրենց համա-  
պատասխանը մեր ազգային պատմութեան մէջ հետեւալ կերպով կը գտնեն։ «Ի նոյն  
«աւուրս տակաւին ի կոստանդինուպոլիս էր Գրիգոր Պատրիարք Երուսաղեմի, և  
«սպասէր զիազօղ առթի՝ առնուլ արքունուաս զիր հասատութեան վասն տեղոյ  
«արրոյն Յակոբայ. քանզի հանապազ կասկածէր ի զրգութեանէ յունաց։ Ապա նա  
«ինչըն Գրիգոր և Յովհաննէս պատրիարք և այլ մհծամիծը հայոց ընդ նոսա՝ միա-  
«բանեալ զիմեցին առ զեսպանն զաղղիացւոց. և ի միջնորդելոյ նորա ել նոր հրո-  
«վարտակ (կամ հատիշէրիֆ) ի սուլտան Մահմուտայ վասն երից ազգաց եւս.  
«այսինքն հայոց, յունաց և լատինացւոց. յորում Հրովարտակի հրամայիւր, զի որ  
«ինչ կայր ցայնժամ ի ձեռս հայոց յերուաղեմ, և որ ինչ ի ձեռս յունաց և  
«լատինացւոց, նոյնաէս մնացէ ի ձեռս նոցա, և մի՛ եւս լիցի գէճ  
«ի վերայ այսր»<sup>1</sup>։

Գերապայշտասի Ցեան Ցեան Միհրարայ Արքայիդ Հօր մերու

... Օնթերցեալ զթութեան՝ յորում ծանուցեալ էիր յազատութեանէ տկարութեանդ՝  
մեծապէն զփառս սոււաք աստեայ, զի վասն մեր և վասն ազգին մերոյ տէրն մեր  
պահպանեալ է զգերյարգելիդ մեր... ուրախացաք ի վիրայ զեղեցկութեանց նորակերտ  
շինուածոց մենաստանին մերոյ, զորոց զրեալ էիր։ Տացէ տէր, զի ի կինդանութեան  
քում զբազում այլս մենաստանս նորակերտս տայցեն կերտել, և զորդիս քոյս ի նոսա

1. Զամեւան, Պատմ. Հայոց. Հատոր Գ. էջ 823.